Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը

Շավարշ Քոչարյան

2008 թվականից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ

Սույն հրատարակությունը հանդիսանում է 2013թ. սեպտեմբերին ֆրանսերեն լեզվով լույս տեսած «Ճգնաժամերի կանխարգելում և խաղաղաշինություն» հոդվածների ժողովածուների երրորդ հատորում համանուն վերնագրով հրապարակված հոդվածի թարմացված և լրամշակված տարբերակը (Chavarche Kotcharian, “Pourquoi le conflit du Haut-Karabagh n’est toujours pas réglé?”, Ed. Jean-Pierre Vettovaglia, **Prévention des crises et promotion de la paix (volume III). Déterminants des conflits et nouvelles formes de prévention, Bruylant**, septembre 2013, pp. 569-593):

Երևան, 2015թ.

Նախաբան

Լեռնային Ղարաբաղի խնդրի ներկա փուլը սկիզբ է առել ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին և վերածվել է հակամարտության Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանն ի պատասխան Ադրբեջանի կողմից ուժային քաղաքականություն որդեգրելու արդյունքում: Ղարաբաղի հակամարտությունը տարբերվում է նախկին Խորհրդային Միության տարածքում ծագած այլ հակամարտություններից նրանով, որ Ղարաբաղի ժողովուրդը իրավաբանորեն անթերի կերպով իրացրել է իր ինքնորոշման իրավունքը մինչև Խորհրդային Միության փլուզումը:

Ղարաբաղյան հակամարտությունը հետխորհրդային տարածքի ամենաարյունալի հակամարտությունն էր՝ տասնյակ հազարավոր զոհերով, հարյուր հազարավոր փախստականներով և մեծ ավերածություններով: Հակամարտության ռազմական փուլը ավարտվեց 1994թ. մայիսին զինադադարի մասին անժամկետ համաձայնագրով: Հատկանշական է, որ զինադադարից անցած 21 տարվա ընթացքում լայնածավալ ռազմական գործողություններ չեն վերսկսվել և հարաբերական խաղաղությունը պահպանվել է առանց միջազգային խաղաղապահ ուժերի ներգրավման:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում միջնորդ են հանդիսանում ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 5 մշտական անդամներից 3-ը՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Ֆրանսիան: Չնայած միջնորդների հետևողական ջանքերին՝ Ղարաբաղյան խնդիրը դեռևս կարգավորված չէ: Դրա հիմնական պատճառն այն է, որ Ադրբեջանը գործում է Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին հակառակ:

Ստորև ներկայացված տեսակետները կարող են չհամընկնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) տեսակետների հետ:

1. Խնդրի էությունը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումն է

1.1. Լեռնային Ղարաբաղը երբևէ չի եղել անկախ Ադրբեջանի կազմում

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) մասին՝ որպես պատմական Հայաստանի մաս, հիշատակումներ կան դեռևս Ստրաբոնի[1], Պլինիոս Ավագի[2], Կլավդիոս Պտղոմեասի[3], Պլուտարքոսի[4], Դիոն Կասիոսի[5] և այլ անտիկ հեղինակների աշխատություններում: Մինչդեռ Ադրբեջան պետությունն առաջին անգամ քաղաքական քարտեզի վրա հայտնվել է 1918 թվականին՝ ռուսական կայսրության փլուզումից հետո:

1918-1920թթ. Լեռնային Ղարաբաղն ինքնակառավարվող միավոր էր և ուներ պետության բոլոր ատրիբուտները: Այդ ժամանակահատվածում նորաստեղծ Ադրբեջանը տարածքային նկրտումներ ուներ հարևան պետությունների հանդեպ՝ ներառյալ Լեռնային Ղարաբաղի տարածքը, և Ազգերի լիգան մերժեց Ադրբեջանի անդամության դիմումը նրա սահմանների անհստակության պատճառով[6]:

1920թ. տարածաշրջանի խորհրդայնացումից հետո Ղարաբաղը, հակառակ նրա ժողովրդի կամքին, ինքնավար մարզի կարգավիճակով միացվել էր Ադրբեջանին բոլշևիկյան Կովկասյան բյուրոյի 1921թ. որոշմամբ, որը այդպիսի որոշում կայացնելու լիազորություն չուներ: Ընդ որում, հաջորդ քայլերի արդյունքում ինքնավար մարզն ընդգրկեց Ղարաբաղի տարածքը ոչ ամբողջությամբ, ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղը նաև զրկվեց Հայաստանի հետ ընդհանուր սահմանից:

Ադրբեջանը իր 1991թ. հոկտեմբերի 18-ի անկախության մասին սահմանադրական ակտով անվավեր է համարել խորհրդային միության ակտերը այն մասով, որը վերաբերում է Ադրբեջանին՝ ներառյալ Ղարաբաղը խորհրդայնացված Ադրբեջանին միացնելու մասին բոլշևիկյան որոշումները[7]:

---

[1] Strabo, "Geography", http://mfa.am/u_files/file/antic/GeographyStrabo.pdf
[2] Pliny the Elder, "Natural History", http://mfa.am/u_files/file/antic/NaturalHistoryPliny.pdf
[3] Claudius Ptolemy, "Geography", http://mfa.am/u_files/file/antic/PtolemyGeography.pdf
[4]Plutarch, "Lives of the Noble Greeks and Romans", http://mfa.am/u_files/file/antic/PlutarchsLives.pdf
[5] Dion Cassius, "Roman History", http://mfa.am/u_files/file/antic/DiosRomanHistory.pdf
[6] League of Nations, Journal N17 of the First Assembly, Geneva 1920 (cited in Shahen Avakian "Nagorno-Karabagh: Legal Aspects", Yerevan 2013, at http://mfa.am/en/artsakh/)
[7] The Constitutional Act on the State Independence of the Republic of Azerbaijan, 18 October 1991, at http://azerbaijan.az/portal/History/HistDocs/Documents/en/09.pdf

1.2. Ղարաբաղը հայաթափելու Ադրբեջանի քաղաքականությունը

1918թ. մայիսից մինչև 1920թ. ապրիլը Ադրբեջանի զինված ստորաբաժանումները հայ բնակչության հանդեպ իրագործեցին բռնություններ և ջարդեր: Միայն 1920թ. մարտին տարածաշրջանում հայկական մշակութային կենտրոն հանդիսացող, Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիում Ադրբեջանի զինված ստորաբաժանումները կոտորեցին և տեղահանեցին շուրջ 40 հազար հայ[8]:

Էթնիկ հողի վրա ռեպրեսիաները և խտրական վերաբերմունքը՝ սոցիալական, տնտեսական ու մշակութային ոլորտներում, հետևողականորեն իրականացվում էր Ադրբեջանի կողմից ողջ խորհրդային ժամանակահատվածում: Այդպիսի քաղաքականության արդյունքում Ղարաբաղի բնակչության էթնիկ հարաբերակցությունը փոփոխվեց. եթե 1923թ. հայերը կազմել են Լեռնային Ղարաբաղի բնակչության 94,4 տոկոսը, ապա 1989թ. տվյալներով հայերի թիվը նվազել է մինչև 76,9 տոկոս[9]:

Ղարաբաղի ժողովուրդը մշտապես ընդվզել է այդ քաղաքականության դեմ և ելնելով Խորհրդային Միության շրջանակներում խնդրի լուծման միակ հնարավորությունից և առկա նախադեպերից՝ բազմիցս դիմել է կենտրոնական իշխանություններին Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու խնդրանքով: Այսպես, 1965թ. պետիցիան ստորագրել էր 45.000 մարդ: Իսկ 1987թ. պետիցիան արդեն ստորագրել էր 80.000 մարդ:

1.3. Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը

Խորհրդային Միության վերջին տարիներին, համաձայն այդ պետության օրենսդրությանը, Ղարաբաղը իրավաբանորեն ձեռք էր բերել անկախություն Ադրբեջանից[10]: 1988թ. փետրվարի 20-ին ինքնավար մարզի պատգամավորների խորհուրդը որոշում կայացրեց դիմելու Խորհրդային Միության, Ադրբեջանի և Հայաստանի պառլամենտներին՝ ինքնավար մարզը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ տեղափոխելու մասին[11]: Հայաստանի պառլամենտը համաձայնվեց, իսկ Ադրբեջանի պառլամենտը մերժեց: Կենտրոնական իշխանությունները, մերժելով խնդրանքը, այնուամենայնիվ Ղարաբաղում

---

[8] Levon Chorbajian et al, "The Caucasian Knot: The History & Politics of Nagorno-Karabagh" (1994)

[9] http://www.ethno-kavkaz.narod.ru/rnkarabax.html

[10] See e.g. Otto Luchterhandt, Der Status der Republik Berg-Karabach aus der Sicht des sowjetischen Staatsrechts, in: Kannatian, Raffi (Hrsg.): Geschichte und Gegenwart in schwierigem Umfeld, Frankfurt/ M 1998, S 266-286.

[11] Decision of the Special Session of the NKAO Council of Peoples Deputies of XX Session, 20 February 1988, at http://nkr.am/en/decision--of-the-special-session-of-the-nkao-council-of-peoples-deputies-of-xx-session/41/

ստեղծեցին հատուկ կառավարման կոմիտե՝ ուղղակիորեն ենթարկելով Ղարաբաղը Մոսկվային[12]: 1989թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի պառլամենտը և Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչները համատեղ որոշում կայացրեցին Հայաստանի և Ղարաբաղի վերամիավորման մասին[13]:

Ստեղծված իրավիճակից իրավական ելք տրամադրեց 1990թ. ապրիլի 3-ի «Խորհրդային Միությունից Միութենական Հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը[14]: Համաձայն այդ օրենքի 3-րդ հոդվածի Միության կազմից Միութենական Հանրապետության դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումները և հավաք բնակվող ազգային փոքրամասնությունները իրավունք ստացան դուրս գալու հանրապետության կազմից և ինքնուրույն որոշելու իրենց հետագա կարգավիճակը:

1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանը, վերոնշյալ օրենքին համապատասխան, հռչակեց իր անկախությունը: Սեպտեմբերի 2-ին Ղարաբաղի ինքնավար մարզը՝ Շահումյանի շրջանի հետ միասին, հռչակեց իրեն անկախ հանրապետություն[15]: Լեռնային Ղարաբաղը չմասնակցեց սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հանրաքվեին, իսկ նույն թվի դեկտեմբերի 10-ին Ղարաբաղում անցկացվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին հանրաքվե միջազգային դիտորդների մասնակցությամբ (Ի դեպ Ադրբեջանի անկախության հանրաքվեն անց է կացվել դեկտեմբերի 15-ին): Դեկտեմբերի 21-ին 11 խորհրդային հանրապետությունների ղեկավարները Ալմա-Աթայի հռչակագրով լուծարեցին Խորհրդային Միությունը[16]:

Այսպիսով Խորհրդային Միության լուծարման պահին նախկին Ադրբեջանի Միութենական Հանրապետության տարածքում ձևավորված էին երկու անկախ և իրավահավասար սուբյեկտներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը:

---

[12] Указ Президиума Верховного Совета СССР от 12 января 1989 года.

[13] «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշում, 1989թ. դեկտեմբերի 1:

[14] Закон о порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР от 3 апреля 1990 года. http://www.libussr.ru/doc_ussr/usr_16379.htm

[15] Declaration on Proclamation of the Nagorno Karabakh Republic, 2 September 1991 at http://www.nkr.am/en/declaration/10/

[16] The Alma-Ata Declaration, 21 December 1991, at http://lcweb2.loc.gov/frd/cs/belarus/by_appnc.html

2. Հակամարտությունը Ադրբեջանի կողմից ի սկզբանե որդեգրած ուժային քաղաքականության արդյունք է

2.1. Հայերի ջարդեր և էթնիկ զտումներ

Ի պատասխան Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի խաղաղ պահանջին՝ մեկ շաբաթ անց Ադրբեջանի ղեկավարությունը Բաքվից 20 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում փետրվարի 27-29-ին կազմակերպեց անասելի դաժանությամբ իրականացված հայերի ջարդեր: Սումգայիթով սկիզբ դրվեց Ադրբեջանի ողջ տարածքում հայերի ջարդեր կազմակերպելու և Ադրբեջանը հայաթափելու Բաքվի հետևողական քաղաքականությանը: 1990թ. հունվարի 13-19-ին ջարդերի ենթարկվեց և վտարվեց Բաքուն չլքած հայերի վերջին զանգվածը: Այդ բարբարոսական գործողությունների արդյունքում եղան հարյուրավոր անմեղ զոհեր[17]:

Օսմանյան կայսրությունում և Հարավային Կովկասում 1915-1920թթ-ին ցեղասպանություն և զանգվածային ջարդեր վերապրած աշխարհասփյուռ հայությունը Սումգայիթով սկիզբ առած հայկական ջարդերի նոր ալիքը ընկալեց որպես դարասկզբի ցեղասպանական քաղաքականության շարունակություն Ադրբեջանի կողմից: Սրված միջէթնիկական լարվածության արդյունքում սկսվեց ադրբեջանցիների արտագաղթը Հայաստանից: Հայաստանում ադրբեջանցիների ջարդեր չեն եղել, բացառության բռնության դրսևորման եզակի դեպքերի, և հայաստանաբնակ ադրբեջանցիների մեծամասնությունը հնարավորություն ունեցավ վաճառելու իրենց բնակարանները և լքելու Հայաստանը իրենց ունեցվածքով:

[17] Caroline Cox and John Eibner, Ethnic Cleansing in Progress: War in Nagorno Karabakh, Institute for Religious Minorities in Islamic World, April 1993; Zoryan Institute, "The Sumgait Tragedy: Pogroms Against Armenians in Soviet Azerbaijan (Volume I, Eyewitness Accounts)" , September 1990; MFA of Armenia, "Sumgait: 20 years later" at http://mfa.am/en/sumgait/; European Parliament, Resolution B3-0049/93, 15.2.93 Official Journal of the European Communities No C42/165, at http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:1993:042:0145:0198:EN:PDF#page=21; European Parliament, Resolution B3-0473/91, 22.4.91 Official Journal of the European Communities No C 106/121, at http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:C:1991:106:0102:0163:EN:PDF#page=20; An Open Letter on Anti-Armenian Pogroms in the Soviet Union, New York Times, 27 September 1990, at http://www.nybooks.com/articles/archives/1990/sep/27/an-open-letter-on-anti-armenian-pogroms-in-the-sov/; Nationalism at Its Nastiest, New York Times, 19 January 1990; Against Xenophobia and Violence NGO, "The Sumgait Syndrome. Anatomy of Racism in Azerbaijan", Yerevan 2012, at http://karabakhfacts.com/wp-content/uploads/2012/12/The-Sumgait-Syndrome.-Anatomy-of-Racism-in-Azerbaijan-ENG.pdf

Արդյունքում, Ադրբեջանը լքեցին 361 հազար հայ փախստականներ, իսկ Հայաստանը՝ 167 հազար ադրբեջանցի փախստականներ[18]:

Ի տարբերություն Ադրբեջանի տարածքում բնակվող հայության՝ Ղարաբաղի և նրան հարակից հայաբնակ շրջանների հայությունը ի վիճակի եղավ դիմելու իրականացվող ջարդերի դեմ ինքնապաշտպանության: Ղարաբաղում էթնիկ զտումների քաղաքականությունը իրականացնելու նպատակով, սկսած 1991թ. ապրիլի 30-ից, Ադրբեջանը կազմակերպեց նաև «Կոլցո» օպերացիան՝ գործի դնելով իր հատուկ նշանակության ուժերը և կարողանալով ներգրավել խորհրդային 4րդ բանակի 23-րդ դիվիզիայի ստորաբաժանումները[19]:

1991թ. վերջին Խորհրդային Միության փլուզումով Ադրբեջանի հայաթափման քաղաքականության վերջին թիրախը մնաց ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

2.2. Ադրբեջանի ագրեսիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ

Սկսած 1992 թվականից Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ իրականացրեց ԼՂՀ դեմ: 1992թ. հունիսի դրությամբ Ադրբեջանի բանակը օկուպացրել էր ԼՂՀ տարածքի մոտ 60 տոկոսը՝ կոտորելով ու տեղահանելով հայ բնակչությանը և ավիրելով բնակավայրերը[20]: Միաժամանակ Ադրբեջանի բանակը հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով ռմբակոծում էր Հայաստանի բնակավայրերը և փորձում զավթել հայկական տարածքներ: Ադրբեջանի նախագահը 1992թ. հայտարարել էր, որ իրենք գրավելու են Հայաստանի հարավային մաս կազմող Սյունիքը (Զանգեզուր), և որ նա իր ոտքերը լվանալու է Սևանա լճում:

Ադրբեջանը Ղարաբաղի դեմ ընթացող պատերազմում ներգրավեց վարձկաններին[21], այդ թվում միջազգային ահաբեկչական ցանցերի՝ Թալիբանի և Ալ-Կաիդայի ավելի քան 2000[22] և ահաբեկիչ Շամիլ Բասաևի հարյուրավոր չեչեն գրոհայիններին[23]:

---

[18] http://www.hrw.org/reports/1994/12/01/seven-years-conflict-nagorno-karabakh; http://www.un.am/en/agency/UNHCR:

[19] Доклад Комитета По Правам Человека Верховного Совета России, 1999г. октябрь.

[20] Baroness Cox, "Survivors of the Maraghar Massacre: It was truly like a contemporary Golgotha many times over", 27 April 1998 at http://www.christianitytoday.com/ct/1998/april27/8t5092.html

[21] Ioannis Charalampidis, "Sponsored to Kill", "MIA" Publishers, Moscow 2013.

[22] Лейла Юнус, "Будущее за профессиональной Армией", Зеркало (Баку), 10 авг. 2002г.

[23] Газета "Ичкерия", (РФ) N8, 25 июня, 1992г.

ԼՂՀ ինքնապաշտպանության բանակին հաջողվեց անցնել կազմակերպված հակագրոհի, ճեղքել Ղարաբաղի շրջափակումը և քայլ առ քայլ հետ մղել Ադրբեջանի զինված ուժերը Ղարաբաղի գրավված տարածքների մեծամասնությունից:

2.3. Միջազգային արձագանքը հակամարտության ծավալմանը և շրջափակմանը

Հայերի դեմ Ադրբեջանի վայրագությունները դատապարտող բազմաթիվ հրապարակումներ տեղ գտան աշխարհի առաջատար պարբերականներում: Այսպես, Սումգայիթի ջարդերից հետո ակադեմիկոս Անդրեյ Սախարովը հայտարարեց, որ «եթե որևէ մեկը կարող էր կասկածել դրանում մինչև Սումգայիթը, ապա այս ողբերգությունից հետո ոչ մեկի մոտ չի մնում ոչ մի բարոյական հնարավորություն պնդելու՝ ԼՂԻՄ-ի [Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի] Ադրբեջանին տարածքային պատկանելության պահպանման վրա»[24]:

Ամերիկյան սենատը իր 1991թ. մայիսի 17-ի բանաձևով դատապարտել է Ադրբեջանի վայրագ գործողությունները խաղաղ բնակչության նկատմամբ, ինչպես նաև Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումը[25]: Իսկ 1992թ. հոկտեմբերի 24-ի 907 բանաձևը արգելեց ԱՄՆ-ի՝ որևէ ձևով աջակցության տրամադրումն Ադրբեջանին, մինչև որ վերջինս չդադարեցնի Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի դեմ շրջափակումը և ուժի կիրառումը[26]:

1993թ. ընթացքում ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը ընդունեց չորս բանաձև, որոնց հիմնական պահանջն էր ռազմական գործողությունների դադարեցումը և խաղաղ բանակցություններով հարցերի կարգավորումը[27]: Հակառակվելով այդ բանաձևերին՝ Ադրբեջանի ղեկավարությունը նախաձեռնում էր նոր զինված գրոհներ և նոր պարտություններ կրում[28]:

Այդ պարտությունները պարտադրեցին Ադրբեջանին դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը զինադադար հաստատելու շուրջ բանակցություններ վարելու առաջարկով:

---

[24] Андрей Сахаров, “письмо М.С.Горбачеву”, “Независимая газета”, 27.10.1992. http://armenianhouse.org/zolyan/nf-ru/karabakh/appendix.html

[25] Condemning violence in Armenia S.RES.128, 17 May 1991, at http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c102:S.RES.128:

[26] Freedom Support Act, SEC. 907. Restriction on Assistance to Azerbaijan[S.2532.ENR], at http://thomas.loc.gov/cgi-bin/query/z?c102:S.2532:

[27] UN Security Council, Resolutions 822 (30 April 1993), 853 (1993 29 July 1993), 874 (14 October 1993), 884 (12 November 1993).

[28] Vladimir Kazimirov, Karabakh and UN Security Council Resolutions, «Highlights», XII.2004, at http://vn.kazimirov.ru/k100eng.htm

2.4.Զինադադարի բանակցությունները

1993թ. սեպտեմբերի 3-ին Հեյդար Ալիեվը իր ստորագրությամբ լիազորում է, այլ պաշտոնյաների շարքում, Խորհրդարանի փոխխոսնակ Աֆեյադին Ջալիլովին «բանակցություններ վարել Ադրբեջանի և ԼՂՀ բարձրագույն ղեկավարների հանդիպումը կազմակերպելու վերաբերյալ» (ստորև՝ լիազորագրի տեքստը բնօրինակով և հայերեն թարգմանությամբ)[29]:



AZƏRBAYCAN RESPUBLİKASI
ALİ SOVETİNİN
SƏDRİ

BAKI
№ 171
«03» сентября 1993 г.

Руководство Азербайджана уполномачивает Заместителя Председателя Верховного Совета А.Джалилова вести переговоры об организации встречи руководителей Азербайджана и НКР.

Осуществляющий полномочия Президента
Азербайджанской Республики
Председатель Верховного Совета
Азербайджанской Республики
Гейдар Алиев

Բաքու
№ 171
03 սեպտեմբերի 1993թ.

Ադրբեջանի ղեկավարությունը լիազորում է Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Ա.Ջալիլովին բանակցություններ վարել Ադրբեջանի և ԼՂՀ բարձրագույն ղեկավարների հանդիպումը կազմակերպելու վերաբերյալ:

Ադրբեջանի Հանրապետության նախագահի
պարտականությունները կատարող
Ադրբեջանի Հանրապետության
Գերագույն խորհրդի նախագահ [ստորագրություն] Հեյդար Ալիև

Ի պատասխան՝ նման լիազորագիր ստանում է ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արկադի Ղուկասյանը: Ձեռք բերված պայմանավորվածության

[29] Владимир Казимиров, “Мир Карабаху”, июль 2009г.

արդյունքում սեպտեմբերի 25-ին Մոսկվայում կայանում է հանդիպում ԼՂՀ և Ադրբեջանի ղեկավարներ Ռոբերտ Քոչարյանի և Հեյդար Ալիևի միջև: Բացի այդ՝ բազմաթիվ երկկողմանի հանդիպումներ են տեղի ունենում ԼՂՀ և Ադրբեջանի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների միջև: Այդ բանակցությունները հիմք ստեղծեցին 1994թ. Բիշքեկյան արձանագրության ստորագրման համար[30] և 1994թ. մայիսին Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև անժամկետ զինադադարի կնքման համար, որին միացավ նաև Հայաստանը՝ որպես հակամարտության մեջ ներքաշված կողմ[31]:

Այդ փաստերը ցույց են տալիս, որ Ադրբեջանի ղեկավարությունը՝

1. ճանաչել է ԼՂՀ-ն առնվազն որպես հակամարտության կողմ և
2. երբ Բաքուն իրականում ցանկանում է ղարաբաղյան խնդրում որևէ արդյունքի հասնել, նա անմիջականորեն բանակցում է ԼՂՀ հետ:

2.5. Ագրեսիայի հետևանքների համար պատասխանատվությունը

Իր իսկ կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում Ադրբեջանը զավթեց ԼՂՀ Շահումյանի շրջանն ամբողջությամբ և Մարտունի ու Մարտակերտի շրջանների արևելյան հատվածները (տես քարտեզը): Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի վերահսկողության տակ անցան հարակից շրջաններ, որոնք անվտանգության բուֆերի դեր կատարեցին՝ արգելափակելով ադրբեջանական կողմից Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի հետագա հրետանակոծումը և ամրապնդեցին ԼՂՀ պաշտպանական դիրքերը Ադրբեջանի կողմից անթաքույց նախապատրաստվող նոր ագրեսիայի դեպքում:

Ագրեսիայի հետևանքների և ուժային քաղաքականության արդյունքում հակամարտության բոլոր կողմերի կրած զոհերի, ավերածությունների և փախստականների ճակատագրի համար ողջ պատասխանատվությունն ընկնում է ուժային քաղաքականություն որդեգրած և ագրեսիա սանձազերծած Ադրբեջանի վրա:

2.6. Ագրեսիայի սահմանումը

Արդյոք, ըստ միջազգային իրավունքի ագրեսիա են որակվում Ադրբեջանի ռազմական գործողությունները ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի դեմ, եթե ԼՂՀ-

[30] The Bishkek Protocol, 5 May 1994, at http://nkr.am/en/the-bishkek-protocol/43/
[31] May 1994 Cease-fire Agreement, at http://nkr.am/en/ceasefire-agreement/147/, Владимир Казимиров, “Мир Карабаху”, июль 2009г.

ն միջազգայնորեն ճանաչված չէ: Ագրեսիայի սահմանումը հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1974թ. 3314(XXIX) բանաձևով[32]: Բանաձևի նախաբանում վերահաստատվում է պետությունների պարտավորությունը զինված ուժ չկիրառելու ժողովուրդներին ինքնորոշման իրավունքից, ազատությունից և անկախությունից զրկելու նպատակով:

Հոդված 1-ում տրված սահմանման համաձայն՝ ագրեսիա է համարվում պետության կողմից զինված ուժի կիրառումը ընդդեմ այլ պետության սուվերենության, տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության: Համաձայն նույն հոդվածի՝ «պետություն» տերմինը օգտագործվում է չկանխորոշելով ճանաչման հարցը կամ տվյալ պետության՝ ՄԱԿ-ի անդամ հանդիսանալու հարցը:

Այդ սահմանումից միանշանակ բխում է, որ միջազգայնորեն չճանաչված և ՄԱԿ-ի անդամ չհանդիսացող պետության դեմ ռազմական գործողությունների իրականացումը ևս հանդիսանում է ագրեսիա:

3. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և պետությունների տարածքային ամբողջականությունը

3.1. Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցությունը միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերում

Համաձայն միջազգային իրավունքի հիմնարար նորմերի՝ տարածքային ամբողջականության սկզբունքը չի կարող հակադրվել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին[33]: Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կանոնադրության առաջին հոդվածը թվարկում է այդ կազմակերպության նպատակները, այդ թվում՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքը: Կանոնադրության երկրորդ հոդվածը սկսվում է նախաբանով, համաձայն որի կազմակերպության անդամները, հետամուտ լինելով առաջին հոդվածում շարադրված նպատակներին, գործելու են երկրորդ հոդվածում թվարկված

[32] UN GA Res. 3314(XXIX), at http://www.un.org/documents/ga/res/29/ares29.htm

[33] Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, http://www.un.am/res/UN%20Treaties/Charter_arm_unicode.pdf
Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտ, Հելսինկի 1975թ., http://www.osce.org/hy/mc/39507?download=true
See e.g. Otto Luchterhandt, Der Status der Republik Berg-Karabach aus der Sicht des sowjetischen Staatsrechts, in: Kannatian, Raffi (Hrsg.): Geschichte und Gegenwart in schwierigem Umfeld, Frankfurt/ M 1998, S 266-286; Vahram Soghomonyan [Hrsg.], Lösungsansätze für Berg-Karabach/Arzach. Selbstbestimmung und der Weg zur Anerkennung, Nomos 2010, 11-77

սկզբունքներին համաձայն: Մասնավորապես, պետությունները պետք է ձեռնպահ մնան «ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ կամ ՄԱԿ-ի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից»:

Այսպիսով, ՄԱԿ-ի կանոնադրությունը հստակորեն սահմանում է, որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է պետությունների միջև հարաբերությունների հարթությանը: Տարածքային ամբողջականությունը, հանդիսանալով սկզբունք ուղղված ՄԱԿ-ի նպատակների իրականացմանը, չի կարող հակադրվել ՄԱԿ-ի նպատակ հանդիսացող ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքին:

Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 103-րդ հոդվածի՝ «Այն դեպքում, երբ Միավորված ազգերի կազմակերպության անդամի՝ սույն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները հակասում են ցանկացած այլ միջազգային համաձայնագրերով նրա ստանձնած պարտավորություններին, ապա գերակայում են սույն կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունները»: Դրանով իսկ ցանկացած երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի և ՄԱԿ-ի կանոնադրության միջև հակասության կամ տարամեկնաբանության դեպքում գերակայում է ՄԱԿ-ի կանոնադրությունը:

Նույնը վերաբերում է նաև 1975թ. Հելսինկյան եզրափակիչ ակտին, որը հայտարարում է ակտի սկզբունքների համապատասխանությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և արտահայտում անդամ պետությունների կամքը Հելսինկյան ակտի սկզբունքները կիրառելիս գործել ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին և սկզբունքներին համապատասխան: Ավելին, Հելսինկյան ակտի 10-րդ սկզբունքը ուղղակիորեն հաստատում է, որ այն դեպքում, երբ ՄԱԿ-ի կանոնադրությամբ անդամների ստանձնած պարտավորությունները կհակասեն որևէ պայմանագրով կամ միջազգային այլ համաձայնագրով ստանձնած պարտավորություններին, կգերակայեն կանոնադրությամբ ստանձնած նրանց պարտավորությունները՝ ՄԱԿ-ի կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան:

Հատկանշական է Հելսինկյան եզրափակիչ ակտի 8-րդ սկզբունքի ձևակերպումը. «բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն լիակատար ազատության պայմաններում, երբ և ինչպես նրանք ցանկանում են, որոշել իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության, և սեփական հայեցողությամբ իրականացնել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը», ինչպես նաև

«մասնակից պետությունները [...] ընդգծում են այդ սկզբունքի խախտման ցանկացած ձևը վերացնելու կարևորությունը»:

Հելսինկյան եզրափակիչ ակտի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ձևակերպումը համահունչ է ՄԱԿ-ի շրջանակներում մշակված 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի և նույն թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրի, ինչպես նաև 1970թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2625 (XXV) բանաձևով հաստատված, միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրին:

Այսպիսով, միջազգային իրավունքի տեսանկյունից կասկածից վեր է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից անկախության հռչակումը և իրականացումը միանգամայն իրավաչափ է, իսկ Բաքվի փորձերը հակադրելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը հակասում են միջազգային իրավունքին, ինչպես նաև ՄԱԿ-ի առջև Ադրբեջանի ստանձնած պարտավորություններին:

3.2. Կոսովոյի գործով Արդարադատության միջազգային դատարանի եզրակացությունը

Արդարադատության միջազգային դատարանի՝ Կոսովոյի վերաբերյալ 2010թ. հուլիսի 22-ի՝ ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա կայացված եզրակացությունում միանաշանակորեն նշվում է, որ միակողմանի անկախության հռչակումը միջազգային իրավունքում որևէ կերպ արգելված չէ, և որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միայն միջպետական հարաբերություններին[34]:

3.3. Ինքնորոշման ալիքը ժամանակակից աշխարհում

Ադրբեջանի կողմից տարածքային ամբողջականությունը ժողովուրդների ինքնորոշման իրավունքին հակադրելը անցյալի վերակենդանացման փորձեր են և դատապարտված են տապալման: Դրա ապացույցն է այն հանգամանքը, որ ՄԱԿ-ի անդամների թիվը 1945 թվականից մինչև այսօր աճել է 3,5 անգամ՝ 55-ից դառնալով 193:

[34] International Court of Justice, "Accordance With International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo", Advisory Opinion of 22 July 2010, at http://www.icj-cij.org/docket/files/141/15987.pdf

Այդ պետությունների շարքում են հարաբերականորեն վերջերս միջազգայնորեն ճանաչված և ՄԱԿ-ի անդամ դարձած Էրիթրեան (1993), Արևելյան Թիմորը (2002), Չեռնոգորիան (2006) և Հարավային Սուդանը (2011):

4. ԼՂՀ կայացած է որպես ժողովրդավարական պետություն

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ապացուցել է իր կարողությունը պատասխանատու լինելու ինքնորոշման իրավունքի իրացման համար: 24 տարիների ընթացքում ԼՂՀ-ն կայացել է որպես *de facto* ժողովրդավարական պետություն, այն էլ Ադրբեջանի ագրեսիային դիմակայելու և շարունակվող շրջափակման պայմաններում[35]:

Ղարաբաղում, սկսած 1991թ. դեկտեմբերի 28-ի խորհրդարանական ընտրություններից, պարբերաբար անց են կացվում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնք բարձր գնահատականի են արժանանում միջազգային դիտորդների կողմից: Գործում է իշխանության թևերի միջև զսպիչների և հակակշիռների համակարգը, որն ամրագրվել է 2006թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ[36]: ԼՂՀ-ի մարտունակ բանակը գտնվում է քաղաքացիական վերահսկողության ներքո[37]:

Ուշագրավ է, որ ի տարբերություն նախկին կոմունիստական ճամբարի այլ անկախացած կամ տոտալիտար համակարգը թոթափած սուբյեկտների՝ ժողովրդավարության ամրապնդման գործընթացը Ղարաբաղի ժողովուրդը հաջողությամբ իրականացնում է առանց միջազգային կառույցների օժանդակության:

5. Հայաստանի Հանրապետության դերակատարությունը

Չնայած Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին 1989թ. դեկտեմբերի 1-ի որոշման առկայությանը, Հայաստանը բնականաբար հարգեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի 1991թ. դեկտեմբերի 10-ին հանրաքվեով

---

[35] Сергей Маркедонов, "Де-факто образования постсоветского пространства: двадцать лет государственного строительства", Аналити9еские доклады Института Кавказа № 5, январь 2012г.; Gardner, Anne-Marie. "Beyond Standards Before Status: Democratic Governance and Non-State Actors." Review of International Studies, 34:3 (July 2008),531-55; https://freedomhouse.org/report/freedom-world/2015/nagorno-karabakh

[36] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն, http://www.nkr.am/hy/constitution/9/

[37] Kolsto, Pal and Helge Blakkisrud. "De-Facto States and Democracy: The Case of Nagorno-Karabakh." Communist and Post-Communist Studies 45.1–2 (2012)

արտահայտված կամքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին: Հայաստանի կողմից ԼՂՀ անկախության *de jure* չճանաչումը պայմանավորված է հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում իր ներգրավվածությամբ:

ԼՂՀ անկախացման պահից սկսած՝ Հայաստանը կառուցել է իր հարաբերությունները ԼՂՀ հետ՝ որպես *de facto* կայացած պետության հետ: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համագործակցությունը կարգավորված է տասնյակ երկկողմ պայմանագրերով, որոնք ընդգրկում են սոցիալական, մշակութային, տնտեսական, ֆինանսական, իրավական, պաշտպանության ոլորտները: Համագործակցության կարևորագույն ուղղություններից է ԼՂՀ միջազգայնորեն չճանաչվածության պատճառով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման սահմանափակումների հաղթահարումը:

Հայաստանի Հանրապետության բանակը չի մասնակցել Ղարաբաղում ինքնապաշտպանական ռազմական գործողություններին՝ սահմանափակվելով Ադրբեջանի ագրեսիվ գործողություններից Հայաստանի Հանրապետության տարածքի պաշտպանությամբ:

Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ագրեսիային դիմակայելու գործողություններին մասնակցել են տարբեր երկրներից, այդ թվում Հայաստանից բազմաթիվ հայ կամավորներ, որոնք համալրել են ԼՂՀ պաշտպանության բանակի շարքերը:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից անընդհատ հնչող ուժի կիրառման սպառնալիքները՝ Հայաստանը մշտապես պատրաստ է ռազմական աջակցություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակին՝ Ադրբեջանի ռազմական ագրեսիան հետ մղելու և ժողովրդի անվտանգությունը պաշտպանելու գործում: Դա բխում է նաև բոլոր պետությունների միջազգային պարտավորությունից նպաստելու, միասնական և առանձին գործողությունների միջոցով, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի իրականացմանը:

Ադրբեջանի դիմադրության պատճառով հակամարտության իրական կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղը չի մասնակցում բանակցային գործընթացին: Բանակցային գործընթացի շարունակականությունն ապահովելու համար Հայաստանը չի ընդհատում իր մասնակցությունը, սակայն բնական է, որ չի կարող իրենով փոխարինել ԼՂՀ-ին:

6. Բանակցային գործընթացի ներկա փուլը

6.1. Մադրիդյան սկզբունքները

Սկսած 1995 թվականից՝ խաղաղ կարգավորման գործընթացն ընթանում է միջազգային մանդատ ունեցող ԵԱՀԿ Մինսկի Խմբի երեք համանախագահների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) միջնորդությամբ բանակցությունների ձևաչափով: Ներկայումս բանակցություններն ընթանում են 2007թ. նոյեմբերին համանախագահների կողմից ներկայացված մադրիդյան առաջարկությունների հիման վրա:

Մեկ տարուց ավելի Ադրբեջանը, որը համաձայնել էր որպես հիմք ընդունել մադրիդյան սկզբունքները, ժխտում էր նույնիսկ դրանց գոյությունը: Այնինչ այդ ընթացքում շարունակվում էին բանակցություններն այդ սկզբունքների շուրջ: Իսկ մադրիդյան սկզբունքների ընդհանուր բովանդակությունը ներկայացվել է Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների կողմից 2009թ. հուլիսի 10-ին Լ'Ակվիլայում արված հայտարարությունում[38]:

Այսպես, հակամարտությունը պետք է կարգավորվի ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման սկզբունքների հիման վրա: Իսկ կարգավորման հրապարակված վեց տարրերը, ըստ Լ'Ակվիլայի հայտարարության, հետևյալն են.

- Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ,
- Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակ, որը կտրամադրի անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ,
- Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը կապող միջանցք,
- Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում՝ իրավականորեն պարտադիր բնույթ կրող կամարտահայտման միջոցով,
- ներքին տեղահանված և փախստական հանդիսացող բոլոր անձանց՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու իրավունք, և

[38] Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, L'AQUILA, 10 July 2009, at http://www.osce.org/mg/51152

- անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն նաև խաղաղապահ գործունեություն:

Մադրիդյան առաջարկությունների հրապարակումից հետո բանակցությունները ակտիվացան: Մինսկի խմբի համանախագահող երկրները մի շարք համատեղ հայտարարություններ ընդունեցին՝ ներառյալ Հայաստանի և Ադրբեջանի հետ համատեղ հայտարարությունները[39]: Բացի այդ, 2008-2011թթ. Հայաստանի և Ադրբեջանի նախագահները Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի հրավերով մի շարք հանդիպումներ ունեցան Ռուսաստանում և հրապարակեցին համատեղ հռչակագրեր[40]:

Այսպիսով, միջնորդները Մադրիդյան սկզբունքներով փորձում են փոխզիջումների արդյունքում մերձեցնել կողմերի հակադիր դիրքորոշումները, կապված ինքնորոշման և տարածքային ամբողջականության խնդիրների հետ: Մի կողմից առաջարկված է ինքնորոշում, բայց միայն Ղարաբաղի տարածքում, գումարած ցամաքային կապը Հայաստանի հետ: Մյուս կողմից՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականություն, բայց առանց Լեռնային Ղարաբաղի: Այդ համաձայնությունը պետք է ապահովի բոլոր փախստականների՝ իրենց բնակավայրեր վերադառնալու իրավունքի իրացումը: Իսկ համաձայնությունների իրականացման համար պետք է ապահովվեն անվտանգության միջազգային երաշխիքներ:

6.2. Մինսկի խմբի համանախագահող երկրների երկու առաքելությունը

Մինսկի խմբի համանախագահող երկրները ըստ էության իրականացնում են երկու առաքելություն: Մեկը հակամարտության գոտում կայունության պահպանումն է: Համանախագահները, ինչպես նաև ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի ղեկավարությամբ իրականացվող շփման գծի դիտարկումները, իրենց լուրջ ներդրումն ունեն զինադադարի պահպանման և լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման կանխարգելման գործում:

---

[39] See OCSE Minsk Group page at http://www.osce.org/mg

[40] Совместное заявление Президентов Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации по нагорно-карабахскому урегулированию от 23 января 2012 года http://news.kremlin.ru/ref_notes/1135; Meeting with Presidents of Armenia and Azerbaijan, Kazan 24 June 2011 http://eng.kremlin.ru/news/2462; Совместное заявление президентов Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации по нагорно-карабахскому урегулированию, 5 марта 2011 года, http://news.kremlin.ru/ref_notes/882; Meeting with Presidents of Armenia and Azerbaijan, Astrakhan, 27 October 2010, http://eng.kremlin.ru/news/1206; Declaration between the Republic of Azerbaijan, the Republic of Armenia and the Russian Federation Maiendorf Castle, 2 November 2008, http://archive.kremlin.ru/eng/text/docs/2008/11/208708.shtml

Համանախագահող երկրների մյուս առաքելությունն է նպաստելը, որպեսզի կողմերը փոխզիջումների միջոցով հասնեն համաձայնության խնդրի կարգավորման շուրջ: Եթե այս ուղղությամբ վերջնական արդյունքը չի արձանագրվել, ապա մեղքը ամենևին միջնորդներինը չէ: Մեղավորը այն կողմն է, որը խոչընդոտում է համանախագահների հետևողական ջանքերին:

6.3. Ինչն է խոչընդոտում բանակցությունների առաջընթացը

6.3.1. Խնդրի էության խեղաթյուրում

Ադրբեջանը, խեղաթյուրելով Ղարաբաղյան խնդրի էությունը և հակամարտության ծավալման պատճառները, շարունակաբար փորձում է ներկայացնել խնդիրը որպես Ադրբեջանի և Հայաստանի միջև տարածքային վեճ: Այդ մոտեցումը խոչընդոտում է Մինսկի խմբի համանախագահների ջանքերին ուղղված հարցի կարգավորմանը: Միաժամանակ, սա փորձ է Ադրբեջանի կողմից՝ խուսափելու պատասխանատվությունից իր իրականացված հայկական ջարդերի, էթնիկ զտումների քաղաքականության և ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ագրեսիայի ու դրանց հետևանքների համար:

6.3.2. Միջնորդների առաջարկությունների ընտրովի և խեղաթյուրված ներկայացում

Մադրիդյան փաստաթղթով առաջարկված երեք հիմնարար սկզբունքներից, որոնց հիման վրա պետք է կարգավորվի հակամարտությունը, Բաքուն մերժում է երկուսը՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը և ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառումը: Շեշտադրումը արվում է միայն մեկ սկզբունքի վրա՝ տարածքային ամբողջականության, այն էլ ՄԱԿ-ի կանոնադրությանը հակասող, աղավաղված ձևով:

2009թ. Լ'Ակվիլայում Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նախագահների հայտարարությունում ներկայացված 6 տարրերից Ադրբեջանը շեշտադրում է անում միայն երկուսի վրա: Բաքուն անվերջ խոսում է Ղարաբաղի վերահսկողության տակ անցած տարածքների վերադարձի մասին «մոռացության մատնելով» Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող ԼՂՀ տարածքները: Բաքուն, ի հակառակ «բոլոր անձանց՝ իրենց բնակության նախկին վայրերը վերադառնալու» իրավունքի՝ խոսում է միայն ադրբեջանցի փախստականների վերադարձի մասին՝ անտեսելով թե՛ Ղարաբաղի օկուպացված շրջաններից, թե՛ Ադրբեջանից հայ փախստականներին:

Միաժամանակ՝ Ադրբեջանը ըստ էության մերժում է Լեռնային Ղարաբաղի միջանկյալ ինքնակառավարվող կարգավիճակը և նրա վերջնական կարգավիճակի

լուծումը իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտման միջոցով:

Մինչդեռ միջնորդների կողմից բազմիցս հայտարարվել է, որ թե՛ կարգավորման 3 հիմնարար սկզբունքները, թե՛ տարրերը իրենցից ներկայացնում են մեկ ամբողջություն, և դրանց համաձայնեցումից հետո պետք է կյանքի կոչվեն: Այսինքն, գործում է սկզբունքը՝ «քանի ամեն ինչ համաձայնեցված չէ, ոչինչ համաձայնեցված չէ»: Ավելին, Մինսկի խմբի համանախագահները հաստատում են, որ չկա որևէ հիերարխիա այդ սկզբունքների միջև, և որ դրանք պետք է կիրառվեն որպես մեկ միասնություն[41]:

Ադրբեջանի ընտրովի և խեղաթյուրված մոտեցումը միջնորդների ներկայացրած առաջարկություններին և բանակցվող փաստաթղթերին վկայում է այն մասին, որ Բաքուն փաստացի ելնում է «ամեն ինչ կամ ոչինչ» ապակառուցողական սկզբունքից:

6.3.3. <u>Մադրիդյան սկզբունքները մի կողմ դնելով՝ անցնել պայմանագրի տեքստի համաձայնեցմանը</u>

Բաքուն առաջարկում է հրաժարվել մադրիդյան սկզբունքների համաձայնեցումից և անմիջապես ձեռնամուխ լինել խաղաղության համապարփակ պայմանագրի մշակմանը: Ակնհայտ է, որ անհնարին է համաձայնության գալ պայմանագրի տեքստի շուրջ, եթե համաձայնեցված չեն պայմանագրի հիմքը հանդիսացող սկզբունքները:

6.3.4. <u>Մինսկի խմբի համանախագահների ձևաչափից հարցի դուրսբերում</u>

Ադրբեջանը բանակցային գործընթացը խոչընդոտելու նպատակով շարունակական փորձեր է կատարում հարցի քննարկումը Մինսկի խմբի համանախագահների ձևաչափից դուրս բերելու ուղղությամբ, այդ թվում տարբեր միջազգային կազմակերպություններում և առանձին պետությունների խորհրդարաններում: Որոշ կազմակերպություններում Ադրբեջանը շահարկում է իսլամական համերաշխության գաղափարը՝ փորձելով կրոնական բնույթ վերագրել հակամարտությունը: Դա ևս մեկ փորձ է խեղաթյուրելու հակամարտության էությունը և պատճառները:

[41] Joint Statement by the Heads of Delegation of the Minsk Group Co-Chair countries, Almaty, 17 July 2010, at http://www.osce.org/press/72085; Remarks by Hillary Clinton at Astana OSCE Intervention, 1 December 2010, at http://www.state.gov/secretary/rm/2010/12/152167.htm

6.3.5. Մինսկի Խմբի Համանախագահների գործունեության վարկաբեկման փորձեր

Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները պարբերաբար հայտարարում են Մինսկի խմբի համանախագահության գործունեության անարդյունավետության մասին և նույնիսկ մեղադրում համանախագահող երկրներ Ռուսաստանին, ԱՄՆ-ին և Ֆրանսիային կողմնակալ լինելու մեջ[42]: Ստացվում է, որ միջնորդները անկողմնակալ կլինեին միայն այն դեպքում, եթե չպահանջեին խնդրի խաղաղ կարգավորում և բավարարեին Ադրբեջանի՝ ամեն ինչ կամ ոչինչ մոտեցումը: Հենց այդ պատճառով համանախագահները 2015թ. հունվարին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի հետ հանդիպմանը «հիշեցրեցին նախարարին [իրենց] մանդատը և անհանգստություն արտահայտեցին ընթացող բանակցային գործընթացի, Մինսկի խմբի համանախագահների դերի և ԵԱՀԿ դիտորդների պարտականությունների վերաբերյալ հնչող քննադատության վերաբերյալ»[43]: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատվիրակությունների՝ վերջերս՝ դեկտեմբերի 3-ին Բելգրադում արված հայտարարության մեջ նշվում էր, որ «Մինսկի խումբը մնում է միակ ձևաչափը, որն ընդունում են կողմերը, և որը վայելում է ԵԱՀԿ մասնակից երկրների ամբողջական վստահությունը»[44]:

7. Ինչն է խոչընդոտում կողմերի միջև վստահության մթնոլորտի ձևավորմանը

Հայկական կողմերը ամբողջությամբ ընդունում են միջնորդների բազմաթիվ կոչերն և առաջարկությունները՝ ուղղված կողմերի միջև վստահության միջոցների ամրապնդմանը: Վստահության միջոցների ամրապնդման խնդիրը բազմաթիվ տարրերից բաղկացած ամբողջական փաթեթ է: Այդ տարրերից են՝ ժողովուրդների միջև ատելություն և թշնամանք սերմանող պետական քարոզչությունից և ռազմատենչ հռետորաբանությունից հրաժարվելը, հարևան ժողովրդի պատմամշակութային ժառանգության ոչ թե ոչնչացումը, այլ պահպանումը, հրադադարի ռեժիմի ամրապնդումը, շփման գծից դիպուկահարների հետքաշումը,

[42] See e.g. "Ilham Aliyev received Ambassadors of OSCE member-states in Gabala", 10.09. 2012 at http://ru.president.az/articles/5977;
МГ ОБСЕ пора сделать выводы из своей неудачной деятельности - МИД Азербайджана, 12.11.2015, http://www.trend.az/azerbaijan/karabakh/2455750.html
Азербайджан раскритиковал деятельность Минской группы ОБСЕ, 20.12.2015, http://qafqaznews.org/2015/11/azerbajdzhan-raskritikoval-deyatel-nost-minskoj-gruppy-obse/

[43] Press Release by the Minsk Group Co-Chairs, Krakow, 27 January 2015, at http://www.osce.org/mg/136876

[44] ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարներ, դեկտեմբերի 3, 2015թ. Բելգրադ, http://www.osce.org/mg/206036

տարբեր ոլորտներում համագործակցության, ինչպես նաև հասարակությունների տարբեր խմբերի միջև շփումների և երկխոսության խթանումը:

Ինչպես հայտարարել է Հայաստանի Նախագահը՝ «Ոչ մի ժողովուրդ և ոչ մի ազգ հայ ժողովրդի կողմից չի ընկալվում որպես թշնամի: Նույն ոգով՝ հայ ժողովուրդն ակնկալում է, որ հարևան երկրների իշխանությունները դադարեցնեն հայ ժողովրդի գոյությունը, ինքնիշխանությունը, կայուն ու անվտանգ զարգացման իրավունքը մերժող և սեփական հասարակությունը բռնության մղող քաղաքականությունը»[45]:

7.1. Քսենոֆոբիա ընդդեմ հայերի

Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությունը ոչ մի առիթ բաց չի թողնում բոլոր հայերին մարդասպան, բարբարոս, ֆաշիստ և Ադրբեջանի թշնամիներ հայտարարելու համար: Ադրբեջանի երիտասարդությունը դաստիարակվում է հայերի հանդեպ ատելության և անհանդուրժողականության մթնոլորտում[46]:

Այդպիսի դաստիարակության արդյունք է ՆԱՏՕ-ի շրջանակներում Բուդապեշտում կազմակերպված դասընթացներին ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովի կողմից հայ սպային քնած ժամանակ կացնի բազմաթիվ հարվածներով դաժանաբար սպանելը: Եվ հունգարական դատարանի վճռով ցմահ ազատազրկման դատապարտված այդ մարդասպանը Ադրբեջանին արտահանձնելուց հետո արդեն օդանավակայանում ազատ է արձակվում, արժանանում է արտահերթ զինվորական կոչման, և նրան միանվագ աշխատավարձ հատկացվեց հունգարական բանտում անցկացրած տարիների համար: Այսպիսով, հայ սպանելը Ադրբեջանում ոչ միայն հանցագործություն չի համարվում, այլ նաև պետականորեն խրախուսվում և հերոսացվում է:

Ադրբեջանի այդ արարքը արժանացավ ոչ միայն Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարության, այլև ԵԱՀԿ մասնակից երկրների ճնշող մեծամասնության, ԵՄ-ի, ԵԽ-ի, ՆԱՏՕ-ի, և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների սուր քննադատությանը[47]: Մասնավորապես, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովի հայտարարությունում շեշտվում է, որ «անհանդուրժողականության հողի վրա կատարված

---

[45] Выступление Президента РА, Председателя РПА Сержа Саргсяна на XIV внеочередном съезде РПА http://www.president.am/hy/press-release/item/2012/12/15/Address-by-Serzh-Sargsyan-at-the-14th-Republican-Convention/

[46] Against Xenophobia and Violence NGO, "The Sumgait Syndrome. Anatomy of Racism in Azerbaijan", Yerevan 2012, p 36-40

[47] See http://karabakhfacts.com/tag/ramil-safarov-case/

հանցագործությունները պետք է համարժեք ձևով պատժվեն», և որ «Սաֆարովի դեպքի նման զարգացումները անպատժելիության զգացման վտանգ են ստեղծում ռասիստական բնույթի առավել լուրջ հանցագործություններ կատարողների համար»: Հանձնաժողովը «մշտապես կապ է տեսել Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ Ադրբեջանի կոշտ հայտարարությունների և Ադրբեջանում ազգությամբ հայերի դեմ առկա խտրականության միջև»[48]:

Հայերի հանդեպ ատելություն սերմանելու նպատակին է ծառայում նաև Խոջալուի ժողովրդի ողբերգության հետ կապված Աղդամի 1992թ. փետրվարի 25-ից 26-ի նենգափոխված իրադարձությունների լայն քարոզչությունը: Այդ բնակավայրը դարձել էր ադրբեջանական բանակի ռազմական հենակետ, որտեղից շուրջօրյա ռմբակոծվում էր Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտը: Գտնվելով օդանավակայանի մոտ՝ Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերն արգելակում էին այն ժամանակ շրջափակված Ղարաբաղի միակ օդային հաղորդակցման հնարավորությունը արտաքին աշխարհի հետ:

Թե՛ իշխանությունները, թե՛ բնակավայրում մնացած բնակչությունը տեղեկացված են եղել նախատեսվող հարձակման և հումանիտար միջանցքի մասին՝ բնակչության դեպի ադրբեջանական բանակի վերահսկողության տակ գտնվող Աղդամ քաղաքը անարգել հասնելու համար: Եվ հենց Աղդամի մոտակայքում, Խոջալուից հեռու Ադրբեջանի բանակի վերահսկողության տակ գտնվող տարածքում կրակել են խաղաղ բնակիչների վրա:

Այդ մասին կան բազմաթիվ վկայություններ, այդ թվում ադրբեջանական աղբյուրների: Այսպես, Խոջալուի դեպքերի ժամանակ Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը 1992թ. հարցազրույցում ասել է. «... միջանցքը, որով մարդիկ կարող էին դուրս գալ, հայերը թողել էին: Այդ դեպքում իրենց ինչի՞ն էր պետք կրակելը: Առավել ևս Աղդամին մոտ տարածքում, որտեղ այն ժամանակ բավարար ուժ կար դուրս գալու և մարդկանց օգնելու համար»[49]: Իսկ Խոջալուի դեպքերը հետաքննող ադրբեջանական հանձնաժողովի նախագահ Ռամիզ Ֆատալիևը վկայում է, որ. «Փետրվարի 22-ին նախագահի, վարչապետի, ԿԳԲ-ի նախագահի և ուրիշների ներկայությամբ կայացավ Ազգային անվտանգության խորհրդի խորհրդակցությունը: Խորհրդակցության ժամանակ ընդունվեց մարդկանց Խոջալուից դուրս չբերելու որոշում: Այսինքն, մենք ինքներս դրդեցինք հայերին դեպի հարձակում: Նույնիսկ

[48] Statement by the European Commission against Racism and Intolerance concerning the pardoning in Azerbaijan of a person convicted of hate crime, Strasbourg, 4 September 2012, at http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/Library/PressReleases/117-04_09_2012_Azerbaijan_en.asp

[49] «Независимая газета», 2.04.1992г.

Անվտանգության խորհրդի անդամները գիտեին, որ հայերը չեն կարող իրականացնել ցեղասպանության նմանվող գործողություններ»[50]:

Խոջալուի բնակիչների ողբերգությունը իբրև «հայերի կողմից իրականացված ցեղասպանություն» քարոզելը նաև նպատակ է հետապնդում ինչպես թուլ չտալու ճշմարտության և իրական մեղավորների բացահայտումը, այնպես էլ կեղծ մեղադրանքներով փորձել հակակշռելու՝ Ադրբեջանի հայ բնակչության դեմ խաղաղ ժամանակ ցեղասպանական քաղաքականության դրսևորումները Սումգայիթում, Կիրովաբադում, Շամխորում, Խանլարում, Բաքվում...

7.2. Հայկական ծագում ունեցող կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելած անձանց մուտքի արգելումն Ադրբեջան

Ադրբեջանը արգելում է հայկական ծագում ունեցող անձանց Ադրբեջան այցելելը, ընդ որում՝ անկախ իրենց քաղաքացիությունից և բնակության վայրից[51]: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ այդպիսի անձինք օդանավակայանից հետ են ուղարկվել:

Զավեշտալի է վերջերս տեղի ունեցած Ղազախստանի քաղաքացի, ազգությամբ ադրբեջանցի Բայրամ Ազիզովին Բաքվի օդանավակայանում պահելու և վտարելու դեպքը միայն այն պատճառով, որ նրա անձնագրում նշում կար Հայաստանի Հանրապետություն այցելելու մասին[52]: Եվ դա այն ժամանակ, երբ ազգությամբ ադրբեջանցի այդ անձը, ինչպես նաև յուրաքանչյուր տարի Հայաստան այցելող իրանցի տասնյակ հազարավոր էթնիկ ադրբեջանցի զբոսաշրջիկներ, բնականաբար, որևէ խնդիր չունեն Հայաստան անարգել մուտք գործելու հետ:

Գնալով մեծանում են Ադրբեջանի սև ցուցակները, որոնք արգելում են Լեռնային Ղարաբաղ այցելած անձանց, այդ թվում պետական և քաղաքական գործիչների, լրագրողների, արվեստի գործիչների, մարզիկների մուտքը Ադրբեջան:

Նույնը վերաբերում է նաև ընտրությունների դիտորդական առաքելությամբ ԼՂՀ այցելած պատվիրակությունների անդամներին: Հավանաբար, Լեռնային Ղարաբաղի կայացած ժողովրդավարությունը տեսնելուց հետո դիտորդների այցելությունն Ադրբեջան հնարավորություն կընձեռեր համեմատել տեսածը ադրբեջանական ավտորիտար իրականության հետ:

---

[50] http://www.azadliq.org/content/article/1818751.html

[51] Azerbaijan Country Specific Information, Bureau of Consular Affairs, US Department of State, at http://travel.state.gov/travel/cis_pa_tw/cis/cis_978.html

[52] Azeri-born Kazakhstan citizen banned from Baku over visit to Armenia, 21 November 2012, at http://www.panarmenian.net/eng/news/133536/

7.3. Պատմության խեղաթյուրում և պատմամշակութային հուշարձանների ոչնչացում

Ադրբեջանի բարձրագույն ղեկավարությունը բազմիցս հայտարարել է, որ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը գտնվում են պատմական ադրբեջանական հողերի վրա, և որ հայերը այս տարածաշրջանում եկվոր են[53]: Քաղաքական պատվերով գործող Ադրբեջանի պատմաբանները հասել են այնպիսի «մտքի թռիչքի», որ իբրև թե ադրբեջանցիները սերում են շումերներից[54]: Եվ դա այն ժամանակ, երբ Հայաստանի և հայերի մասին հայտնի էր առնվազն երեք հազարամյակ առաջ, իսկ Ադրբեջանը հարյուր տարի չկա, ինչ հայտնվել է քաղաքական քարտեզի վրա:

Բազմաթիվ նյութեր են տարածվում, այդ թվում Ադրբեջանի նախագահի ներածականով, որ տարածաշրջանի հայկական եկեղեցիները, խաչքարերն ու այլ պատմամշակութային հուշարձաններն իբրև թե հանդիսանում են ադրբեջանական պատմական հուշարձաններ[55]: Բնական հարց է առաջանում, որ եթե Ադրբեջանում իրոք հավատում են, որ հայկական պատմամշակութային ժառանգությունը իրենցն է, ապա ինչո՞ւ են անխնա ոչնչացնում դրանք: Բնական է, որ ադրբեջանական լինելու պատճառով չէ, որ բարբարոսաբար ոչնչացվել են համամարդկային նշանակության մշակութային արժեք հանդիսացող Ջուղայի միջնադարյան խաչքարերը[56]: Նույն տրամաբանությամբ Ադրբեջանի կողմից օկուպացված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքներում ոչնչացվել են հայերի դարավոր ներկայության մասին վկայող բոլոր հուշարձանները[57]:

7.4. Տնտեսական շրջափակում

Ադրբեջանը իրականացնում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական շրջափակում, փակ է պահում բոլոր հեռահաղորդակցության ուղիները: Ադրբեջանը միակ պետությունն է, որը գործում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղված գործընթացի դեմ, քանի որ դա կհանգեցնի Թուրքիայի կողմից փակված սահմանի բացմանը և իրականացվող շրջափակման դադարեցմանը:

---

[53] Rouben Galichian, "Clash of Histories in the South Caucasus", London 2012.
[54] R. Aliyev, Y. Yousoufov, I. Babayev, I. Jafarov and A. Mamedova, authors. History of Azerbaijan, 6th grade textbook (Baku: 2002)
[55] Aziz Alakbarli et al, "Monuments of the Western Azerbaijan." Baku, Nurlan 2006.
[56] Old Jugha: Chronicling the Destruction, at http://mfa.am/en/jugha
[57] Samvel Karapetian, "The State of Armenian Historical Monuments in Azerbaijan and Artsakh", Yerevan, 2011, at http://mfa.am/u_files/file/monuments3.pdf.

7.5. Շփման գծում լարվածության պահպանումը

Թե՛ համանախագահող երկրների, թե՛ միջազգային կառույցների կողմից բազմիցս կոչեր են արվել հակամարտության կողմերին ձեռնարկելու քայլեր շփման գծի վրա լարվածությունը թուլացնելու ուղղությամբ: Մասնավորապես, միջնորդները առաջարկել են փոխադարձաբար հետ քաշել դիպուկահարներին և ձևավորել շփման գծի վրա միջադեպերի հետաքննության մեխանիզմ: Թե՛ Հայաստանը և թե՛ Լեռնային Ղարաբաղը հայտնել են իրենց պատրաստականությունը կյանքի կոչելու այդ առաջարկությունները, իսկ Ադրբեջանը՝ մերժել[58]: Համանախագահների 2015թ. Նյու Յորքում արված հայտարարության մեջ ևս մեկ անգամ կոչ է արվել կողմերին համաձայնություն հայտնել զինադադարի խախտման միջադեպերի հետաքննման մեխանիզմի ստեղծմանը: Հայտարարության մեջ, մասնավորապես, նշվել է, որ Հայաստանը համաձայնություն է հայտնել քննարկելու նման մեխանիզմի մանրամասները, և կոչ է արվում Ադրբեջանին հանդես գալ նմանօրինակ դիրքորոշմամբ[59]: Այս անգամ ևս միջնորդների հայտարարությունից երկու օր անց Ադրբեջանը, ըստ էության, մերժեց վերոնշյալ առաջարկությունը[60]:

Ավելին, ՀՀ Նախագահը դեռևս 2010թ. Բրյուսելում առաջարկել է պայմանագիր կնքել ուժի կիրառումից հրաժարվելու մասին, ինչը ևս մերժվել է Ադրբեջանի կողմից:

Բաքուն պարբերաբար գործողություններ է ձեռնարկում Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի սահմաններին լարվածությունը պահպանելու, հայկական ուժերին զոհեր պատճառելու, սահմանամերձ հայկական բնակավայրերին վնաս հասցնելու ուղղությամբ: Այս նպատակով գործի են դրվում ադրբեջանական դիպուկահարները և դիվերսիոն ստորաբաժանումները, ինչպես նաև իրականացվում է սահմանամերձ շրջանների պարբերական հրետանակոծումը տարբեր տրամաչափի զինատեսակներից: 2014թ. Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտումների պատճառով կողմերի զինված ուժերում զոհերի ընդհանուր թիվն անցավ 130-ը[61]: Պատահական չէ, որ 2015թ. հունվարի 25-ին Կրակովում ԵԱՀԿ Մինսկի համանախագահները Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի հետ հանդիպումից հետո տարածված հաղորդագրությունում՝ կոչ արեցին հենց

---

[58] Senor Hasratyan: Armenia and NKR agreed to withdrawal of snipers still in 2009, ArmenPress, 16.02.2011, at http://armenpress.am/eng/news/640485/; Azerbaijani Defense Ministry: "We won't withdraw snipers from the front line, unless war ends", APA, 17.09.2013, at http://en.apa.az/news/199602

[59] http://www.osce.org/mg/185746

[60] Эльмар Мамедъяров: Необходимо создать механизм и план вывода армянских вооруженных сил с оккупированных территорий Азербайджана, 27.09.2015, http://1news.az/politics/20150927125205536.html

[61] Հայկական զինուժի կորուստները 2014 թվականին. Ռազմինֆո; Ադրբեջանի պաշտպանական ու անվտանգության համակարգերի կորուստները 2014-ին. Ռազմինֆո http://razm.info/58149

Ադրբեջանին «պահպանելու հակամարտության խաղաղ կարգավորման՝ իր պարտավորությունը»[62]:

Իրադրության լարվածության պահպանման համար Բաքվի իշխանությունները նաև կոպտորեն խախտում են միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերը: Մասնավորապես, սահմանամերձ գոտիների հայ բնակիչները, որոնք մոլորվել և պատահաբար հայտնվել են Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող գոտիներում, ոչ միայն անհիմն կերպով պահվում են Ադրբեջանում որպես փաստացի պատանդներ, այլև ենթարկվում են դաժան կտտանքների: Այդպես ադրբեջանական գերության մեջ 2010թ. սպանվել է հայ գյուղացի Մանվել Սարիբեկյանը, իսկ 2014թ.՝ Կարեն Պետրոսյանը[63]: Ավելին, ադրբեջանական լրատվամիջոցները հեռարձակում էին տեսանյութեր, որոնցում Ադրբեջանի իրավապահները ցուցադրաբար, ահաբեկիչներին բնորոշ ոճով նսեմացման են ենթարկում Կարեն Պետրոսյանին[64]:

Հրաժարվելով հրադադարի ռեժիմի ամրապնդումից, դիպուկահարների դուրսբերումից, միջադեպերի հետաքննության մեխանիզմի ձևավորումից և պարբերաբար կազմակերպելով սադրանքներ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հետ սահմանին՝ Ադրբեջանի ղեկավարությունն ուղղակի պատասխանատվություն է կրում շփման գծում լարվածության պահպանման և բոլոր կողմերի յուրաքանչյուր զոհի համար՝ անկախ նրա ազգությունից:

7.6. Պատերազմի վերսկսման սպառնալիքները

Ադրբեջանը 2003-2015թթ. ընթացքում 30 անգամ ավելացրել է իր ռազմական ծախսերը՝ հասցնելով 4.8 միլիարդի[65]: Հետևողականորեն սպառազինվելով՝

---

[62] Press Release by the Minsk Group Co-Chairs, Krakow, 27 January 2015, at http://www.osce.org/mg/136876

[63] Baku's lie revealed – Armenian captive Manvel Saribekyan was tortured in Azerbaijan, 05.11.2010, at http://www.panarmenian.net/eng/politics/news/56384/; Answer of the MFA Spokesperson Tigran Balayan to the question by the radio "Liberty", 08.08.2014, at http://www.mfa.am/en/interviews/item/2014/08/08/balayan_petrosyan/; The answer of the Deputy Foreign Minister Shavarsh Kocharyan to the Question of "First news" service of the Public Television of Armenia, 22.08.2014, at http://www.mfa.am/en/interviews/item/2014/08/22/qocharyan_com_kpetrosyan/; State Department comments on killing of Karen Petrosyan, 16.08.2014, at http://www.panorama.am/en/comments/2014/08/16/state-department/; Man's Death After Mysterious Border Crossing Sparks Row Between Baku, Yerevan, 11.08.2014, at http://www.rferl.org/content/death-border-azerbaijan-armenia/26525206.html

[64] https://www.youtube.com/watch?v=2wZT9WASvlc

[65] The SIPRI Military Expenditure Database, at http://www.sipri.org/research/armaments/milex/milex_database; Azeris to Boost Defense Spending Amid Risk of Armenia War, 19.11.2014, at http://www.bloomberg.com/news/articles/2014-11-19/azeris-to-boost-defense-spending-amid-risk-of-armenia-war

Ադրբեջանը գերազանցել է ԵԱՀԿ-ի և Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրով նախատեսված բոլոր վերին շեմերը[66]:

Երկրի բարձրագույն ղեկավարությունը օգտագործում է ցանկացած առիթ՝ անգամ դպրոցների բացման արարողությունները, որպեսզի հնչեցնի իր սպառնալիքները՝ լուծելու ղարաբաղյան խնդիրը ռազմական ուժով[67]: Եվ դա այն ժամանակ, երբ միջնորդների կոչերը խաղաղ բանակցային գործընթացով խնդիրը կարգավորելու մասին հասցեագրված են հենց Ադրբեջանին: Օրինակ, 2011թ. Դովիլում Ֆրանսիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի նախագահների հայտարարությունում ասված է, որ «Ուժի կիրառումն է ստեղծել առճակատման և անկայունության ներկայիս իրադրությունը: Նորից դրա օգտագործումը միայն կբերի նոր տառապանքներ և ավերածություններ և կարժանանա միջազգային հանրության դատապարտմանը: Մենք հստակորեն կոչ ենք անում կողմերի առաջնորդներին իրենց բնակչությանը նախապատրաստել խաղաղությանը, այլ ոչ թե պատերազմին»[68]:

Միջազգային խաղաղության պահպանումը և խաղաղ միջոցներով վեճերի կարգավորումը ՄԱԿ-ի կանոնադրությունում առաջին նպատակն է: Ադրբեջանը, հրաժարվելով շփման գծում լարվածության թուլացմանն ուղղված միջոցառումներից և ռազմական գործողությունների վերսկսման սպառնալիքներով գործում է այդ նպատակին դեմ:

7.7. Ձեռք բերված պայմանավորվածություններից հրաժարում

Բանակցությունների ընթացքը չի կարող լինել արդյունավետ, քանի դեռ Ադրբեջանը շարունակում է գործել ձեռք բերված պայմանավորվածություններին

---

[66] SIPRI Yearbook 2011: Armaments, Disarmament and International Security, Oxford University Press, 2011, p 412.

[67] http://www.azatutyun.am/content/article/24676913.html; http://www.apa.az/en/news.php?id=176277; http://en.president.az/articles/5252; http://en.president.az/articles/4739; http://en.president.az/articles/4423; http://www.news.az/articles/politics/51631; http://en.president.az/articles/3327; http://www.historyoftruth.com/news/latest/10097--karabakh-conflict-can-be-resolvedpeacefully-through-the-pressure-on-armenia; http://milaz.info/en/news.php?id=6145; http://www.hurriyetdailynews.com/n.php?n=azerbaijan-backs-turkey-over-cyprus-but-fearskarabakh-impact-says-azeri-deputy-pm-2011-07-21; http://www.hurriyetdailynews.com/n.php?n=top-azeri-official-warns-of-fresh-war-in-caucasus-2011-07-18; http://news.az/articles/politics/40654; http://asbarez.com/97048/azerbaijan-must-attack-yerevan-says-political-expert/; http://www.milaz.info/en/news.php?id=5897; http://www.news.az/articles/politics/39670; http://ca.reuters.com/article/topNews/idCATRE75P0LD20110626; http://en.trend.az/news/karabakh/1891595.html

[68] Joint statement on the Nagorno-Karabakh Conflict, by the Presidents of the OSCE Minsk Group Co-Chair Countries at the G-8 Summit, Deauville, 26 May 2011, at http://www.osce.org/mg/78195

հակառակ, ինչը նաև կասկածի տակ է դնում ապագա հնարավոր համաձայնությունների կատարումը նրա կողմից:

Որպես բանակցությունների հիմք ընդունելով համանախագահների կողմից ներկայացված Մադրիդյան փաստաթուղթը՝ Ադրբեջանը միաժամանակ փորձում է հիմնախնդրի կարգավորման հիմք ներկայացնել 1993թ. ՄԱԿ ԱԽ կողմից ընդունված բանաձևերը (822 (1993), 853 (1993), 874 (1993), 884 (1993) [69]), ընդ որում, միտումնավոր խեղաթյուրելով այդ բանաձևերի էությունը:

Հենց Ադրբեջանն է խափանել բոլոր չորս բանաձևերի իրականացումը՝ չկատարելով դրանցում ամրագրված հիմնական պահանջը՝ անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները, առանց որի հնարավոր չէր իրականացնել բանաձևերի մյուս դրույթները: Հակառակ ՄԱԿ ԱԽ պահանջների, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի «թշնամական գործողությունները» մինչ օրս չեն դադարել:

Այդ բանաձևերում Անվտանգության խորհուրդը իր լիակատար աջակցությունն է հայտնում Մինսկի խմբի շրջանակներում խաղաղ բանակցային գործընթացին և կոչ անում կողմերին «ձեռնպահ մնալ որևէ գործողությունից, որը կխոչընդոտի հիմնախնդրի հանգուցալուծումը»: Մինչ օրս Ադրբեջանը շարունակաբար խաթարում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության գործունեությունը՝ փորձելով հիմնահարցը տեղափոխել այլ հարթակներ, կոպտորեն խախտելով զինադադարի հաստատման ռեժիմը և կրկնելով ուժի կիրառմամբ խնդիրը լուծելու իր սպառնալիքները:

Հարկ է նշել, որ որևէ բանաձևում Հայաստանը նշված չէ՝ որպես հակամարտության կողմ: Հայաստանին կոչ էր արվում միայն «շարունակել ազդեցություն գործադրել» Լեռնային Ղարաբաղի հայերի վրա՝ ռազմական գործողությունների դադարեցման նպատակով, ինչը Հայաստանը լիովին իրագործել է: Ավելին, բանաձևերում Լեռնային Ղարաբաղը ճանաչվել էր հակամարտության կողմ: Եվ բանաձևերում «ուղիղ շփումներ» հաստատելու կոչերի ներքո համապատասխանաբար հասկացվում էին շփումներ Բաքվի և Ստեփանակերտի միջև:

Բանաձևերում պահանջվում է «վերականգնել շրջանի տնտեսական, տրանսպորտային և էներգետիկ կապերը»: Սակայն հակամարտության սկզբից առ այսօր Ադրբեջանը շարունակում է իրականացնել Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակում՝ բացահայտ հայտարարելով, որ դա իր արտաքին

[69] ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը, http://2001-2009.state.gov/p/eur/rls/or/13508.htm

քաղաքականության առաջնայնություններից է: Կոչ է արվում նաև «ապահովել տարածաշրջանում, մասնավորապես՝ հակամարտությունում ներգրավված բոլոր շրջաններում մարդասիրական օգնության տրամադրման միջազգային գործունեության անարգել ապահովումը», սակայն առայսօր Ադրբեջանը շարունակում է խոչընդոտել միջազգային մարդասիրական ծրագրերի իրականացմանը Լեռնային Ղարաբաղում:

ՄԱԿ բանաձևերի նմանատիպ ընտրովի և խեղաթյուրված մեկնաբանությամբ Ադրբեջանը, ըստ էության, հակադրվում է իր իսկ կողմից բանակցությունների համար որպես հիմք ընդունված Մադրիդյան փաստաթղթին:Մադրիդյան սկզբունքներին հակառակ՝ Ադրբեջանի ղեկավարությունն անվերջ հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղը երբևիցե չի կարող լինել Ադրբեջանի կազմից դուրս: Դա փորձ է միակողմանի կանխորոշելու բանակցային գործընթացի ելքը և, ըստ էության, հավակնություն է ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքի հանդեպ, ինչը վկայությունն է Բաքվի՝ ի սկզբանե որդեգրած ագրեսիայի քաղաքականության շարունակության:

Ավելին, Ադրբեջանի ղեկավարը սկսել է տարածքային պահանջներ ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետության հանդեպ, հայտարարելով, որ Հայաստանի տարածքները բաժանում են Թուրքիան և Ադրբեջանը, և որ դրանց պատկանելությունը Հայաստանին պատմական անարդարություն է[70]: Հենց

[70] "Тюркский саммит: Азербайджан, Турция, Казахстан и Киргизия усомнились в территориальной целостности Армении", 06.10.2009, http://www.regnum.ru/news/polit/1212286.html; "Речь Ильхама Алиева на X саммите глав государств тюркоязычных стран", 16.09.2010, at http://ru.president.az/articles/737; "Передача Зангезура Армении расчленила тюркский мир - президент Азербайджана", 27.04.2011, at http://www.regnum.ru/news/polit/1399201.html; "Речь Ильхама Алиева на всенародных празднествах по случаю Новруз байрамы", 19.03.2013, at http://ru.president.az/articles/7671; "Ильхам Алиев: Азербайджан восстановит территориальную целостность", 26.06.2013, at http://inosmi.ru/sngbaltia/20130626/210413704.html; "Вступительная речь Ильхама Алиева на заседание Кабинета Министров, посвященное итогам социально-экономического развития за девять месяцев 2013 года и предстоящим задачам", 07.10.2013, at http://ru.president.az/articles/9716; "Ильхам Алиев принял участие в торжественной церемонии, посвященной 90-летнему юбилею Нахчыванской Автономной Республики", 08.04.2014, at http://ru.president.az/articles/11356; "Президент Азербайджана, Верховный главнокомандующий Вооруженными силами Ильхам Алиев побывал в Н-ской воинской части в Агдаме", 06.08.2014, at http://ru.president.az/articles/12487; "Речь Ильхама Алиева на открытии мечети Гейдара в Баку", 26.12.2014, at http://ru.president.az/articles/13981; "Поздравление Ильхама Алиева азербайджанскому народу по случаю Дня солидарности азербайджанцев мира и Нового года", 01.01.2015, at http://ru.president.az/articles/13982; Президент Ильхам Алиев: С передачей Зангезура от Азербайджана Армении была прервана географическая связь всего тюркского мира, 12.09.2015,

ծավալապաշտական քաղաքականությամբ առաջնորդվելով էր, որ 1990-ական թթ. սկզբին Ադրբեջանը նախաձեռնեց ագրեսիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ և փորձեր կատարեց զավթելու նաև Հայաստանի՝ Ադրբեջանի հետ սահմանամերձ տարածքներ:

Ադրբեջանը կոպտորեն խախտում է իր իսկ կողմից ստորագրած եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) համաձայնագրերը հրադադարի ռեժիմի (1994թ. մայիս) և հրադադարի ռեժիմի ամրապնդման (1995թ. փետրվար) մասին: 1995թ. համաձայնագիրը ուղղված է խաղաղ բանակցային գործընթացի առաջընթացի համար ավելի բարենպաստ պայմանների ստեղծմանը[29], այնտեղ առաջարկվում է ստեղծել միջադեպերի հետաքննության մեխանիզմ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները բազմիցս նշել են շփման գծի վրա միջադեպերի հետաքննության մեխանիզմը կյանքի կոչելու կարևորությունը: Այդ մեխանիզմի ձևավորման վերաբերյալ կողմերի պայմանավորվածությունն ամրագրվեց 2011թ. Սոչիում Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների համատեղ հռչակագրում[71]: Սակայն Ադրբեջանը, ի հակառակ պայմանավորվածության, վետոյի կիրառման սպառնալիքի տակ թույլ չտվեց, որպեսզի 2012թ. ԵԱՀԿ բյուջեում գումարներ նախատեսվեն միջադեպերի հետաքննության մեխանիզմի ներդրման համար[72]:

2008թ. նոյեմբերի 2-ին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահները ստորագրեցին Մայնդորֆի հռչակագիրը, որտեղ կարևորվում էր խնդրի խաղաղ կարգավորումը: Սակայն նույն ամսին իտալական «RAI International» հեռուստաալիքին տրված հարցազրույցում Ադրբեջանի նախագահը հայտարարեց,

---

http://www.trend.az/azerbaijan/politics/2432526.html; Президент Ильхам Алиев: Демократическое развитие невозможно представить без свободной печати, 22.07.2015, http://www.trend.az/azerbaijan/politics/2418643.html; Президент Азербайджана: Нагорному Карабаху никогда не будет предоставлена независимость, 28.05.2015, http://www.trend.az/azerbaijan/politics/2399901.html

[71] Совместное заявление президентов Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации по нагорно-карабахскому урегулированию, 5 марта 2011 года, http://news.kremlin.ru/ref_notes/882

[72] International Crisis Group, Tackling Azerbaijan's IDP Burden, 27 February 2012, at http://www.crisisgroup.org/~/media/Files/europe/caucasus/azerbaijan/b067-tackling-azerbaijans-idp-burden.pdf

որ հակամարտությունը խաղաղ միջոցներով կարգավորելու պարտավորությունը չի բացառում ռազմական լուծումը[73]:

Ամեն անգամ, երբ ձեռք են բերվում պայմանավորվածություններ, որոնց իրացումից միջազգային հանրությունը լուրջ առաջընթաց է ակնկալում կարգավորման գործընթացում, Ադրբեջանը հետ է կանգնում: Այդպես եղավ ԱՄՆ-ի միջնորդությամբ 2001թ. Քի Վեստյում[74] ձեռք բերված պայմանավորվածությունից հետո:

2011թ. Կազանի հանդիպումից առաջ Մինսկի Խմբի համանախագահները և միջազգային հանրությունը կողմերին հորդորում էին, հարգելով նախապես ձեռք բերված պայմանավորվածությունները, ընդունել կարգավորման հիմնարար սկզբունքները՝ խաղաղության համապարփակ համաձայնագրի տեքստի համաձայնեցմանն անցնելու նպատակով: Սակայն, հակառակ նախապես ձեռք բերված համաձայնությունների, Ադրբեջանը ներկայացրեց տասը նոր առաջարկներ և տապալեց հնարավոր առաջընթացը[75]:

7.8. Ղարաբաղի հիմնահարցի ծառայեցումը ժառանգական ավտորիտար ռեժիմի պահպանմանը

Միջազգային կառույցների գնահատականներով Ադրբեջանը ամրապնդված ավտորիտարիզմի պետություն է, որտեղ կոպտորեն ոտնահարվում են մարդու իրավունքները և ազատությունները[76] [77]:

---

[73] "Aliyev's statements meant to exert pressure on Armenia", 28 November 2008, at http://www.panarmenian.net/eng/news/27741/

[74] Key West Peace Talks on Nagorno-Karabakh, Press Statement, Richard Boucher, Washington, DC, 14.03.2001, at http://2001-2009.state.gov/r/pa/prs/ps/2001/1243.htm

[75] Comment by Foreign Minister Edward Nalbandian to the Media after the Presidential Meeting in Kazan, 25 June 2011, at http://mfa.am/en/interviews/item/2011/06/25/kazan/

[76] "Azerbaijan: Autocracy in an oil paradise", DW, 19.05.2012, at http://www.dw.de/azerbaijan-autocracy-in-an-oil-paradise/a-15958397;"They Took Everything from Me", Human Rights Watch, 29.02.2012, at http://www.hrw.org/reports/2012/02/29/they-took-everything-me; "Beaten, Blacklisted, and Behind Bars", Human Rights Watch, 26.10.2010, at http://www.hrw.org/reports/2010/10/26/beaten-blacklisted-and-behind-bars-vanishing-space-freedom-expression-azerbaijan; World Report 2015 – Azerbaijan, Human Rights Watch, at http://www.hrw.org/world-report/2015/country-chapters/azerbaijan; "International Perceptions Index 2012", Transparency International, at http://www.transparency.org/cpi2012/results; "Azerbaijan: the spring that never blossomed: freedoms suppressed in Azerbaijan", Amnesty International, 16.11.2011, at http://www.amnesty.org/en/library/info/EUR55/011/2011/en; "Running Scared: Azerbaijans' silenced voices", The International Partnership Group for Azerbaijan, 2012, at http://www.article19.org/data/files/medialibrary/3003/12-03-26-azerbaijan.pdf; "ECRI Report on Azerbaijan", ECRI, Council of Europe. 31.05.2011, at http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/country-by-country/azerbaijan/AZE-CbC-IV-2011-019-ENG.pdf; "Azerbaijan", Freedom in the World 2012, Freedom House, at http://www.freedomhouse.org/report/freedom-world/2012/azerbaijan; Between Fiction and

Խաթարելով բանակցային գործընթացը, սադրելով լարվածության մեծացում և հռչակելով հայության դեմ պայքարը՝ Բաքվի իշխանությունները իրականում պայքար է մղում սեփական ժողովրդի դեմ: Այդ պայքարի նպատակը ժողովրդի աճող դժգոհության պայմաններում ժառանգական իշխանության պահպանումն է: Էներգակիրների արտահանումից ստացված եկամուտները ուղղվում են ոչ թե երկրում սոցիալական բևեռացվածությունը մեղմելու, այլ իշխող վերնախավի ընտանեկան հարստությունը բազմապատկելու, ռազմական ծախսերը ավելացնելու, Ղարաբաղյան խնդիրը խեղաթյուրված ներկայացնող, հայերի հանդեպ ատելություն սերմանող քարոզչություն վարելու վրա[78]:

Ադրբեջանի հանդեպ իբրև թե միջազգային իրավակարգի անարդարության և միջազգային կառույցների խտրական վերաբերմունքի դեմ անընդմեջ հնչող դժգոհությունը, աշխարհասփյուռ հայության դավադրությունների մասին առասպելները, Ադրբեջանի ռազմական ծախսերի մասին թվերը և պատերազմին

Reality: Aliyev's "Oceania", Foreign Policy Journal, 10.02.2015, at http://www.foreignpolicyjournal.com/2015/02/10/between-fiction-and-reality-aliyevs-oceania/; "The Two Faces of Azerbaijan's Mr. Aliyev", NYT, 11.01.2015, at http://www.nytimes.com/2015/01/12/opinion/the-two-faces-of-azerbaijans-mr-aliyev.html?_r=0; "Turning black gold into sporting glitter: what Azerbaijan tells us about modern sport", Guardian, 19.12.2014, at http://www.theguardian.com/sport/2014/dec/19/black-gold-sporting-glitter-azerbaijan-modern-sport; "Azerbaijan Raids RFE/RL Baku Bureau", RFE/RL, 26.12.2014, at http://www.rferl.org/content/release-rferl-condemns-azeri-raid-on-baku-bureau/26764363.html; U.S. 'Alarmed' As Azerbaijan Targets RFE/RL's Baku Office, RFE/RL, 29.12.2014, at http://www.rferl.org/content/azerbaijan-official-lashes-out-criticism-over-rferl-raid/26767855.html; "The 'broken window' approach to international relations" Washington Post, 31.12.2014, at http://www.washingtonpost.com/opinions/the-broken-window-approach-to-international-relations/2014/12/31/98fb4802-9046-11e4-a412-4b735edc7175_story.html; "Ten Days in the Life of Ilham Aliyev, President of Absurdistan", Huffington Post, at http://www.huffingtonpost.com/till-bruckner/state-department-barely-c_b_6390974.html; "The dangers of online criticism in Azerbaijan", Aljazeera, 29.08.2013, at http://www.aljazeera.com/indepth/opinion/2013/08/2013826114929165535.html; "Azerbaijan cracks down while chairing Council of Europe", BBC, 12.10.2014, at http://www.bbc.com/news/world-europe-29559009; "#BBCtrending: The president who threatened war on Twitter" BBC 08.08.2014, at http://www.bbc.com/news/blogs-trending-28710785; Azerbaijani Party Leader Offers Reward For Writer's Ear, RFE/RL, 11.02.2013, at http://www.rferl.org/content/azerbaijan-novelist-reward-cutting-off-ear-aylisli/24899021.html

[77] European Parliament resolution of 10 September 2015 on Azerbaijan, http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//NONSGML+TA+P8-TA-2015-0316+0+DOC+PDF+V0//EN

[78] OCCRP names Aliyev "Person of the Year", 31.12.2012, at https://occrp.org/occrp/index.php/en/ccwatch/cc-watch-indepth/1772-occrp-names-aliyev-qperson-of-the-year-q-; Offshore Companies Link Corporate Mogul, Azerbaijan's President, RFE/RL, 04.04.2013, at http://www.rferl.org/content/azerbaijan-aliyev-family-offshore-businesses/24947900.html; Pricey real estate deals in Dubai raise questions about Azerbaijan's president, WP, 05.03.2010, at http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2010/03/04/AR2010030405390.html; The Corleones of the Caspian, FP, 10.06.2014, at http://foreignpolicy.com/2014/06/10/the-corleones-of-the-caspian/;

պատրաստվելու մասին հայտարարությունները նպատակ ունեն մեկուսացնելու ադրբեջանական հանրությանը ժողովրդավարական գործընթացներից և վախեցնելու ժողովրդին թվացյալ արտաքին վտանգով:

Արտաքին թշնամու մասին չընդհատվող քարոզչությունը հիմք է ծառայում ռեժիմի դեմ դժգոհություն արտահայտող բոլոր այլախոհներին հայտարարելու թշնամիներ և հայկական ու հակաադրբեջանական ուժերի աջակիցներ և բռնաճնշումների ենթարկելու նրանց[79]:

***

Այսպիսով, Ադրբեջանի բոլոր գործողություններն ուղղված են ոչ թե վստահության մթնոլորտի ձևավորմանը, այլ հայերի դեմ ատելության սերմանմանը, ոչ թե փոխզիջումների հիման վրա համաձայնության հասնելուն, այլ բանակցային գործընթացի տապալմանը: Ադրբեջանը պատրանք ունի, որ ժամանակակից քաղաքակիրթ աշխարհին բնորոշ միջնորդների և միջազգային հանրության հանդուրժողականությունը խրախուսում է իր ռասիզմն ու ագրեսիվությունը: Այդպիսի պատրանքներով առաջնորդվող քաղաքականության շարունակությունը անխուսափելիորեն բերելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը:

8. Հայկական կողմերի կառուցողականությունը

Լեռնային Ղարաբաղի խնդիրը դեռևս կարգավորված չէ, և պահպանվում է ստատուս քվոն, քանի որ ադրբեջանական կողմը պատրաստ չէ գնալ փոխզիջումների և դիմադրում է հակամարտության կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես լիիրավ բանակցային կողմ ներգրավմանը: Կասկածից վեր է, որ միակողմանի զիջումներ չեն լինում, և որ ցանկացած ժողովուրդ ինքն է տնօրինում իր ճակատագիրը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ի սկզբանե դրսևորել է կառուցողական մոտեցում՝ չպահանջելով բանակցային գործընթացի համար որպես նախապայման իր ճանաչումն Ադրբեջանի կողմից: Չնայած, որ դա արդարացված կլիներ և՛ իրավական, և՛ բարոյական տեսանկյունից, և կվկայեր Ադրբեջանի կողմից ուժային քաղաքականությունից հրաժարման մասին:

Հայաստանի կառուցողականությունը դրսևորվել է համաձայնությամբ ընդունելու Մադրիդյան փաստաթուղթը որպես հիմք բանակցությունների համար:

[79] Azerbaijan detains prominent human rights activists in fresh crackdown, August 15, 2014, http://www.theguardian.com/world/2014/aug/15/azerbaijan-detains-human-rights-activists-fresh-crackdown

Այդ փաստաթուղթը ենթադրում է Լեռնային Ղարաբաղում իրավաբանորեն պարտադիր ուժ ունեցող հանրաքվեի անցկացումը, չնայած ԼՂՀ անկախության հանրաքվեն անց է կացվել դեռևս 1991թ. այն ժամանակ գործող ԽՍՀՄ օրենսդրությանը և միջազգային իրավունքին լիովին համապատասխան:

Հայաստանի դիրքորոշումը արտահայտված է Հանրապետության Նախագահի 2012թ. դեկտեմբերի 15-ի ելույթի հետևյալ հատվածում.

«Շարունակելու ենք բանակցային գործընթացը: Երախտագիտություն հայտնելով Մինսկի խմբի համանախագահող երկրներին՝ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում ներդրած ջանքերի համար՝ միաժամանակ մշտապես միջնորդների ու միջազգային հանրության ուշադրությունն ենք հրավիրելու խաղաղ կարգավորումը հնարավոր դարձնող վստահության միջոցների ստեղծման և ամրապնդման հարցերին:

Ադրբեջանի քաղաքականությունն ընդհանրապես և մասնավորապես դիպուկահարներին հետ քաշելուց հրաժարվելը, շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմի գործարկումից հրաժարվելը, մարդասպաններին հերոսացնելը, այլատյացությունը և ռասիզմը խրախուսելը, անհուսալի և երկերեսանի կեցվածքը բանակցություններում որևէ կերպ չեն նպաստում վստահության միջոցների ստեղծմանը և համապատասխան արձագանք չստանալու դեպքում ծայրաստիճան սրում են իրավիճակն ամբողջ տարածաշրջանում: Բնական և բանական կլինի, որ Արցախն օր առաջ զբաղեցնի իր տեղը բանակցությունների սեղանի շուրջ, ուստի, մեր ջանքերն ուղղելու ենք նշված հարցի շուտափույթ լուծմանը:

Արդյունավետ բանակցությունների վարումը կառուցողական մթնոլորտում հնարավոր կլինի միմիայն այն դեպքում, երբ հակամարտության կողմերն իրապես ցանկանան հասնել խնդրի արդար լուծման՝ հրաժարվելով անհիմն առավելապաշտական նկրտումներից»[80]:

[80] http://www.president.am/hy/press-release/item/2012/12/15/Address-by-Serzh-Sargsyan-at-the-14th-Republican-Convention/

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱՐՑԱԽ)



ԼՂՀ ներկայիս սահմանները

ԼՂՀ սահմանադրության 142-րդ հոդվածի համաձայն, «Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասության ներքո»:

ԼՂՀ սահմանները 1991թ. սեպտեմբերի 2-ի անկախության հռչակագրի համաձայն

Ադրբեջանի փաստացի վերահսկողության տակ գտնվող ԼՂՀ տարածքները

ԼՂՀ վարչական սահմանները

մասշտաբ 1:1 000 000

0 10 20 30 կմ.